հրաշակերտեց, յայտնի չէ ի՞նչ բաների պատրաստութեան համար: Բայց քարի ամբողջ երեսի վրայ, որպէս գրիչով մոմը հարթելով, շատ գրեր արձանագրեց, որոնց վրայ նայելն միայն զարմանք է բերումէ:

Որքա՜ն ուղիղ էր Խորենացու կարծիքը, ես այդ դատել չէի կարող, միայն տեսնում էի, որ նրա ասածները բոլորը կային: Բայց Ասլանը ասում էր, թէ այս ամէնը այն ամենահին ժամանակներից են մնացել, երբ մարդիկ տուներ չէին շինում, երբ նրանք այրերի մէջ էին բնակւում: Այդ իմ խելքին նստում էր, որովհետեւ տեսնում էի, այրերից շատերը այնքան ահագին մեծութիւն ունէին, որ կարող էին ամբողջ ընտանիքների բնակութեանը յարմարել:

Բերդի շրջակայքը ման գալուց յետոյ, մենք մտանք բուն բերդի մէջ: Այդ անմատչելի ամրոցը, որպէս ասեցի, նստած է ժայռոտ քարափի գլխին, որը ուղղաձիգ բարձրութեամբ քաշոած է դէպի երկինք, եւ այնտեղից ահռելի կերպով հսկում է ամբողջ քաղաքի վրայ: Դէպի ամէն կողմ, ուր եւ հայեացք ես ձգում, դարձեալ երեւում են արձանագրութիւններ, որոնք լուռ եւ անբարբառ նայում են մարդու երեսին, կարծես ասել են ուզում. «մենք միշտ կը մնանք անոերծանելի եւ երբեք չի պիտի երեւան հանենք հնութեան գաղտնիքը»...

Ասլանը պտտելով բերդի մէջ, որպէս նկատում էի ես, արձանագրութիւնների եւ այլ հնութիւնների վրայ միայն հարեւանցի նայելով էր անցնում, աւելի ցոյց տալու համար, թէ նրանցով հետաքրքրւում է: Իսկ մեր երիտասարդ առաջնորդը ոգեւորոած էր առասպելական պատմութիւններով, ամենեւին չէր նկատում, թէ իր պատմութիւնները որքան նշանակութիւն ունէին նրա համար: Նա անընդհատ խօսում էր: Բայց իմ նկատողութիւնից չէր կարող վրիպել այն խորին ուշադրութիւնը, որով Ասլանը քննում էր ամրոցի մթերանոցը, պահեստի տեղերը, որ լցոած էին վառօդով եւ զանազան զէնքերով, զինորների օթեւանները, եւ այն վաղեմի, ժանգոտած թնդանօթները, որոնք, իրանց բերանները դարձրած դէպի քաղաքը, պահպանում էին նրան մշտական երկիւղի ներքոյ: Այդ թնդանօթներով մի ժամանակ ենիչարիները ռմբակոծում էին քաղաքը:

Ես նկատում էի, Ասլանը մի առանձին ուշադրութեամբ հետազօտում էր այն ծակերը, այն գաղտնի անցքերը, որոնք քարափի վերեւից իջնում էին դէպի նրա խորքերը եւ ստորերկրեայ ճանապարհներով կորչում էին, սատանան գիտէ, թէ դէպի ո՛ր կողմը: Նա արծոի հայեացքով զննում էր նրանց ուղղութիւնը, տարածութիւնը, եւ որպէսզի կասկածանքի առիթ չտայ մեր առաջնորդին, ժպտելով հարցրեց նրանից.